



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԺԲ. 16.

ՀԱՏՈՐ Ժ.

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1881

ԹԻՒ 4



**ԱՐԵՎԱԿՆԱՅԻՆ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆ**

Ճարտնչիք այսպէս կը կոչեն իրենց երկիրը: Արդարեւ գեղեցիկ երկիր մ'է ճարտն իր անառատախիա բլուրներովն, ծովու և ցամաքի փառաւոր տեսարաններովն, և Ֆիւճի կոչուած նուիրական լեռովն որ բոլոր ճարտնի բնակչաց պարծանաց առիթ մ'եղած է: Ամառը ճարտնի մէջ օդը տաք և անձրևոտ է, բայց կլիմայն ընդհանրապէս այն աստիճան զուարճալի է որ մարդիկ կրնան հոն տարւոյն մեծ մասը տուներէն դուրս անցունել: Չը մեռն այնպէս մեզմ է որ Գրքիոյ քաղաքին մէջ ծառերը միշտ կանաչ կը մնան, և ծաղիկները բողբոջ կ'որձակեն: Այս երեսին պատկերը Դոքիոյ քաղաքին փողոցներէն մէկուն պատկերն է, և պատկերին մէջ հեռուէն ընդ ազօտ կը տեսնուի Ֆիւճի լեռը:

1549ին Փրանկիսկոս Քսաւերեան և ուրիշ կաթողիկ միսիոնարք ճարտն գացին: Հոն իսկզբան յաջողեցան իրենց հետևողներ գանելու, բայց երբ բռին թէ Պապն իրաւունք ունի բոլոր աշխարհի վրայ իշխելու, այն երկրէն վաճառուեցան և անոնց հետևողները սպաննուեցան: Որովհետև ճարտնչիք շատ կը վախնային թէ Քրիստոնէութիւնը զիրենք օտար իշխանութեան մը լուծին սակ պիտի գնէր, հրովարտակներ հանուեցան այն կրօնքին դէմ, և մինչև այսօր այն հրովարտակներէն ոմանք փողոցներու զուխը տախտակներու վրայ դրուած կը տեսնուին: Մինչև 1854 ճարտն գոց էր օտարականաց դէմ: Այն թուականին գաշնագրութիւն մը կնքուեցաւ ճարտնի և Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջևեղ, և այս գաշնագրութեան զօրութեամբ քանի մը նաւա-

հանդիսոններ բացուեցան օտար վաճառականաց, և հիմա ճարտնի շատ քաղաքներուն մէջ Ամերիկացի և ուրիշ միսիոնարք Քրիստոնէութեան վրայ աւելի ճամարիա գաղտփար կուտան ճարտնչուոց, ոչ թէ շանտալի հպատակեցնել զանոնք օտար իշխանութեան մը, այլ քարոզելով գիտաւորաբար որ կը փրկէ զմարդիկ իրենց մեղքերէն: Այն մարդիկ որոնցմէ ոմանք կը տեսնուին առաջին պատկերին առջևի կողմն կը կոչուին Սամուրաքի, և ճարտնչուոց զինուորական և ուսումնական դասը կը կազմեն, և ճարտնի ցեղապետներու պաշտօնակալներն էին: 1862 ի յեղափոխութենէն ի վեր յորմ աստային զրութիւնը (տերէպէյլիք) վերցուաւ Սամուրաքի այլևս ամենին կախեալէն տեղապետներէն, բայց դեռ կը կրեն երկու սուր ի նշան իրենց առջի-

կարգին, և փողոցներու մէջ յօխորտանաօք կը պտտին: Մուրերն անոնց և երբ այլը մեռնի, որդին որ սղազգեստին տակ այնպէս գրուած են որ կարծես թէ կրողին մարմնոյն մէջէն կ'անցնին: Քարմերուն զգեստն ալ Սամուրահներու զգեստին նման է, միայն թէ քարմերուն գլուխներն ամիլուած կ'ըլլան:


Առաջին պատկերին մէջ կը տեսնուի կին մը որ երկու մարդոց ուսերուն վրայ տեսակի մը զեւապակի մէջ նստած է: Ճարմնի քաղաքներուն մէջ մէկ փողոցէն միւս փողոցը սովորաբար այսպիսի զեւապակներով կ'երթնեն: Երկրորդ պատկերին մէջ կը տեսնուի ճարմնի մէջ ճամբորդութիւն ընելու ուրիշ կերպ մը: Ճամբորդը կը նստի ձկնաբերչա կոշուած կառքի մը մէջ զոր մէկ տեղէ ուրիշ տեղ տանելու համար մարդ մը առջևէն կը քաշէ և ուրիշ մարդ մը ետեւի կողմէն յառաջ կը վարէ:

Երրորդ պատկերին մէջ կը տեսնուին խեղճ մարդիկ որ Ֆիւճի լեռը կամ ուրիշ լեռանց զագաթները կ'երթան պաշտելու անշունչ կուռքեր գորս այլք կը պաշտեն կուստուններու մէջ: Ֆիւճի լեռը 13,000 ոտք բարձր է և միշտ ձիւնապատ, և միայն յունիս և օգոստոս ամիսներու մէջ կառնելի է այն լեռան գլուխն ելնել: Այս ամիսներու մէջ ստորին կարգէ մարդիկ Ֆիւճի լեռնէն վեր կ'ելլեն անվայելուչ երգեր երգելով և կատակներ ընելով, և թէև ուխտի կ'երթան ըսելով թէ «կուզեն սուրբ ըլլալ», բայց առեղի վատթար ետ կը դառնան:

Արեգակնային թագաւորութեան մարդիկ քաղաքավար և երջանիկ կը լինին, սակայն անոնց քաղաքավարութեան տակ ծածկուած են անաւոր մեղքեր և դաւան վշտեր: Ընտանեկան կենաց քաղցրութիւնը ըստ արժանաւոր չեն գիտեր, սակայն և այնպէս ճարմնի մէջ մտոգր քաղցր են, և կամայք և աղջկուք առեղի աղէկ վարմունք կը տեսնեն այրերէն քան ուրիշ շատ հեթանոս երկիրներու մէջ: Այսու ամենայնիւ ճարմնի

մէջ կ'ենը ազախին է իր ամուսնոյն, որ ոչ շատ ժամանակ ետքը բոլոր ճարմնի ժողովուրդը պիտի ըլլայ Քրիստոնեայ ազգ մը:

Օտարականացի ճարմն մուտ գլուխ



նեն, ինչպէս ըսինք, նոր է. բայց այս քիչ ժամանակի մէջ մեծ փոփոխութիւններ եղած են այն երկրին մէջ: Կառավարութիւնը ճարմնի շատ երիտասարդներ զրկած է ուրիշ երկիրներ կրթութիւն համար, և Անգղիայէն և Ամերիկայէն ուսուցիչներ բերել տարով հաստատած է դպրոցներ և վարժարաններ: Ժողովուրդը շուտով հասկցած է թէ որչափ օգտակար է ունենալ երկրագործութեան համար նոր գործիքներ որպիսիք կը գտնուին յուսարեալ երկիրներու մէջ, և հիմա ճարմնի մէջ կը շինուին

ԳԵՂԵՑԻԿ ՏՂՈՒ ՄԸ ՊՍՏՈՒԹԻՒՆԸ

Ճամանակաւ պատկերահան մը ունի զեղեցկութեան մասին աննման մարդու մը պատկերը գծել, շատ տեղեր պատեցաւ, բայց չգտնելով այնպիսի գեղեցիկ մարդ մը ինչպէս կ'ուզէր, միաբը դրաւ բոլոր աշխարհ պատել մինչև որ գտնէ իր երևակայածին պէս գեղեցիկ մէկը: Քանի մը տարիներ ճամբորդութիւն ըրաւ, և տեսաւ շատ այրեր, կիներ, ծերեր և տղաքներ, և ասոնց մէջ գտաւ տղայ մը որ անճառելի գեղեցկութիւն ունէր, և այն տղան պատկերը գծագրելով դրաւ թագաւորական պալատը: Շատ տարիներ ետքը նոյն պատկերահանը ուզեց տեղութեան մասին աննման մարդու մը պատկերը գծել, և այսպիսի մարդ մը գտնելու համար դարձեալ ճամբորդութիւն ընելով շատ տեղեր պատեցաւ, և հուսկ ուրեմն բանտի մը մէջ գտաւ այնպէս ազեղ մարդ մը որպէս կ'երևակայէր: Պատկերահանը հասկնալով թէ այն մարդուն տեղութիւնը նշան էր աւոր սրտին չար զգացմանց և կրից, բանտարկելոյն հարցումներ ըրաւ անոր անցեալ կենացը վրայ: Բանտարկեալն ըսաւ թէ ինք ժամանակաւ շատ գեղեցիկ տղայ մ'էր, և չարութեան մէջ ընկաւ առ քաղցր յառաջ երթալով տակաւ առ տակաւ կորսնցուց իր գեղեցկութիւնն, և հասաւ այն տը-



լաւ արօրներ և ուրիշ գործիքներ և մեքենաներ նման անոնց որ Եւրոպայէն և Ամերիկայէն տարուած են հան: ճարմնիք անհաւատ ըլլալու վտանգի մէջ են երբ մերժեն իրենց հեթանոսական սնապաշտութիւնները, բայց Քրիստոնեայ ազգեր՝ մեծ յաջողութիւն կը գտնեն Աւետարանը տարածելու այն երկրին մէջ, և կը յուսան

գեղութեան, և վերջապէս դողութեան և մարդասպանութեան ոճրի մէջ բռնուելով գրուեցաւ բանաւ: Պատկերահանը այն ոճրագործ և տեղ մարդուն պատմութեան հասկցաւ թէ նա էր այն գեղեցիկ տղայն որոյ պատկերը գծագրած էր ժամանակաւ: Ահա, բարուց ապականութիւնն այնպիսի գե-

լաւ արօրներ և ուրիշ գործիքներ և մեքենաներ նման անոնց որ Եւրոպայէն և Ամերիկայէն տարուած են հան: ճարմնիք անհաւատ ըլլալու վտանգի մէջ են երբ մերժեն իրենց հեթանոսական սնապաշտութիւնները, բայց Քրիստոնեայ ազգեր՝ մեծ յաջողութիւն կը գտնեն Աւետարանը տարածելու այն երկրին մէջ, և կը յուսան

դեցիկ սողայն գարշելի տգեղութեան մէջ ձգած էր :

Այս պատմութենէն կը սորվինք որ երբ մարդուս սիրան ապականութեամբ լի է , դէմքն ալ որ սրտին հայելին է , կ'աւրուի : Սիրելի աղջքը , եթէ կ'ուզէք որ ձեր դէմքերը գեղեցիկ մնան , ձեր սրտերը սիրով և բարի զգացումներով լեցուցէք , սուրբ և բարեմիտ եղիք : Թէև Աստուած ոմանց գեղեցիկ և այլոց ազեղ դէմք տուած է , և ոչ ոք կրնայ իր դէմքը փոխել , սակայն այն ազեղ դէմքն որ գեղեցիկ զգացումներ կը ցուցնէ՝ հազարապատիկ աւելի գեղեցիկ է քան այն գեղեցիկ դէմքն որ ազեղ խորհուրդներ և զգացումներ կը յայտնէ : Սա ալ չմոռնաք որ եթէ այս կենաց մէջ ֆրիստոսի օրինակին նմանիլ ուզէք , հանդերձեալ կենաց մէջ ֆրիստոսի գէմքին նմանութիւնը պիտի առնէք :

ՍՈՒՏ ԶԻՍՍԵՆՈՒ ՊՍՏՃԱՍՆԵՐ

Շատ պատճառներ կան թէ ինչու համար սուտ խօսելու չենք :

Եւհ . Ամէն մարդ զգոյշ ըլլալու է սուտ խօսելէ , քանզի այն մարդը որ սուտ կը խօսի՝ չկրնար ինքզինք յարգել և իւր անձը կը նուաստացնէ բուն իսկ իւր աշուքներուն առջև : Նաև այն երիտասարդն որ միշտ կը խօսի ճշմարտաբար թէև մեծ փորձութեան մէջ է սուտ խօսելու , շուտով պիտի սասանայ այլոց , զորօրինակ , իւր ծնողաց , ուսուցիչներուն , տէրերուն և ընկերներուն համարումն ու վստահութիւնը : Ամէն մարդ պատրաստ պիտի ըլլայ ընդունել անոր ասօքներն իբրև ճշմարիտ , և յանձնել անոր կարևոր գործեր : Աւելի մեծ գործի պիտի կարգուի , և աւելի մեծ վարձ պիտի ընդունի : Բայց այն արդան կամ աղջիկն որ սուտ կը խօսի , ժամանակ մը ետքը պիտի կորսնցունէ իր ծնողաց և ուսուցչաց համարումը : Այնպիսիք չեն կրնար վստահելի ըլլալ , ուստի և չեն կրնար աւելի մեծ գործի կարգուիլ :

Եւհ . Ամէն ոք զգոյշ ըլլալու է սուտ խօսելէ այլոց սիրոյն համար : Պատանի մը որ սուտ կը խօսի , կ'անպատուէ իւր ծնողքն և ուսուցիչները : Իւր սուտերով կը խաբէ զայլս , և այսպէս աւելի կամ նոսաղ վնաս կը հասցունէ անոնց : Թվ կրնայ հաշուել վնասն զոր իրարու կը հասցնեն մարդիկ խաբէութեամբ : Ամէն ոք իրաւունք ունի սպասելու մենէ որ ինչ որ կը խօսինք անոնց՝ ըլլայ ճշմարիտ , և եթէ սուտ խօսքեր ըսենք , կը կատարենք անոնց իրաւունքը :

Եւհ . Ամէն ոք զգոյշ ըլլալու է սուտ խօսելէ , քանզի ստատոս շրջութունը շատ դարշելի են Աստուծոյ : Աստուած ճշմարտութեան Աստուած է , կը սիրէ ճշմարտութիւն և զանոնք որ կը խօսին ճշմարտութիւնը : Կ'ատէ ամէն տեսակ խաբէութիւն , և հակառակ է անոնց որ խաբէութիւն կ'ընեն : Սուրբ գրոց մէջ կան շատ օրինակներ որ կը ցուցնեն թէ Աստուած կը հաճի այնպիսիներէ որ կը խօսին ճշմարտութիւն նոյն իսկ ամենէն դժուարին և վտանգաւոր պարագաներու մէջ , այլ խափու կը պատժէ զանոնք որ սուտ կը խօսին : Սա խօսք են անոնց մէջ որոց համար Աստուած կ'ըսէ թէ պիտի չմանեն երկնից թագաւորութիւնը : Յայտ . ԻՍ . 27 :



ՄՈՂՈՔ

Եթէ կարգանք Գ թագաւորաց ԻԳ . 10 համարը , կը տեսնենք որ իսրայէլի որդիքը , մոռնալով միոյ ճշմարտին Աստուծոյ պաշտօնը , երկրպագութիւն կ'ընէին իրենց գրայի ազգաց չաստուածներուն : Այս պատկերը կը ցուցնէ այն չաստուածներէն մին որ կը կոչուէր Մուօ և կը պաշտուէր Ամենայնիցներէն : Մարդաղոհ , մանանակ տղայք , կը մատուցուէին Մոզրայ : Կ'ըսուի թէ այս չաստուծոյն կուռքը որ էր պղնձէ՝ կը ջուրուցանէին յոյժ , և անոր բազկաց վրայ կը գնէին սղայք , որ այրելով կը սպառէին : Ժողովրդեան բազմութիւն մը թմբուկներու ձայնիւ ու դաղակաւ կը խեղդէր այն զոհեալ թշուառ սղայոց գոչիւնը : Քրիստոնեայ ծնողաց մանկուկը ս'ըջափ շնորհակալ ըլլալու են որ Քրիստոնեայ ընտանեաց մէջ ծնած են :

ԼՈՒՏԵՐԻ ՆԱՄԱԿ

ԱՌ ՈՐԴԻՆ ԻՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ Ընորհք և խաղաղութիւն Քրիստոսով , սիրելի որդեակ իմ : Ուրախութեամբ կը լսեմ որ աղէկ

կուտանիս և ստէպ կ'արթնես : Այսպէս յարատէս , և երբ ի տուն դառնամ , քեզի գեղեցիկ նուէր մը պիտի բերեմ :

Գեղեցիկ և ուրախայ պարտէզ մը գիտեմ յորում բազում մանկտի կան : Անոնք ոսկեղէն զգեստներ հագած են , և ծառերուն տակէն գեղեցիկ խնձորներ , տանձեր , կեռասներ , սալորներ և ծիրաններ կը ժողովն , կ'երգեն , կը խաղան և ուրախ են : Նաև ոսկեղէն սանձերով և արծաթեայ թամբերով փոքրիկ և սիրուն ձիեր ունին : Ես գրեթէ տիրոջը հարցուցի , “ Ասոնք որո՞ց տղաք են ? ” Ան պատասխանեց թէ . “ Մարք են այնպիսիք որ արթնան և ուտանիլը կը սիրեն , և բարի են : ” “ Սիրելի բարեկամ իմ , ըսի , ես ալ որդի մը ունիմ որոյ անունն Յովհաննէս Լուսեր է : չի՞ կրնար ըլլալ որ այն ալ այս պարտէզը գայ , այս գեղեցիկ խնձորներէն և տանձերէն ուտէ , և այս զարդարուն ձիերուն վրայ հեծնէ ? ” Մարդն ըսաւ , “ Եթէ որդիդ արթնան և ուտանիլը կը սիրէ և բարի է , պիտի գայ յայս պարտէզ , և իւր փոքր եղբայրներն ալ ի միասին . և երբ ամէնքն մէկտեղ ժողովին , փողեր , քնարներ , և ամէն տեսակ նուագարաններ պիտի ունենան և պիտի պարեն , նախ փոքրիկ աղեղներով նետրնկէց պիտի լինին : ” Եւ ինձի պարտիկին մէջ պարելու համար պատրաստուած գեղեցիկ մարգագետին մը ցուցուց : Հոն խիտ առ խիտ ոսկեղէն փողեր և քնարներ , և փայլուն արծաթեայ աղեղներ կախուած էին : Բայց ժամանակը գեռ կանուխ ըլլալով տղայք տակաւին կերակուր կերած չէին : Ուստի պարելու ժամուն չկարենալով սպասել այսպէս ըսի պարտիկին տերոջը . “ Ա՛հ , սիրելի Տէր իմ , ես անմիջապէս պիտի երթամ ու բոլոր տեսածներս որդւոյս դրեմ , և պատուիրեմ որ յարատուութեամբ արթնէ , աղէկ ուսանի և բարի ըլլայ , այնպէս որ կարենայ այս պարտէզը գալ : Բայց հորաքոյր մին ալ ունի , ան ալ հետը բերելու է : ” Եւ մարդն ըսաւ . “ Թող այնպէս ըլլայ , գնա և իրեն այսօրինակ գրէ : ”

Ուրեմն , սիրելի որդեակ իմ Յովհաննէս , որչափ կրնաս արթնէ և ուսման պարապէ , և ըսէ փոքրիկ եղբարցդ ալ որ այսպէս ընեն . յայնժամ ի միասին այդ պարտէզն պիտի երթաք : Ողջ լեւ ի Տէր :

Սիրելի հայր քո

ՄԱՐՏԻՆՈՍ ԼՈՒՏԵՐ

Յամի 1530 .

Թարգմանեաց

Յ . Յ . ՄԱՆԻՍԱՃԱՆ

Այնթապ . փետրուար 25 1884

